





Տպարանս փոխադրուած է Պապը ալի  
նատտէսի, թիւ 38, Իգտոմ լրագրին դէմ:





ՀԱՆՐԻՍ  
ՏԱՍՆՕՐԵԱՅ

هزارآيداق  
مجموعه علوم

HANRAKIDAGUE  
JOURNAL ARMÉNIEN ENCYCLOPÉDIQUE

Ե. ՏԱՐԻ — ՆՈՐ ՇՐՋԱՆ

ԹԻԻ 16

1 ԱՊՐԻԼ 1902

## Ի Մ Գ Ա Մ Ե Ր Ի Մ

Վարդ լոյսին մեջ նոր բացուած  
Ծաղիկ մ'է սա, ո՛վ Աստուած.  
Անմահ դրախտին չքնաղ տունկ,  
Տայ մեզ երկնի բոյր ու խունկ:

Ո՛հ, այս մանկիկը սիրուն  
Բերաւ մեր սան նոր զարուն,  
Թռչուն՝ ոյր ձայնին սրկար շեշ  
Կարծես երգ մ'է քաղցր ու հեշ:

Մանկիկ սիրուն, զըւարթուն  
Դողսրիկ, փափուկ եւ ժպտուն.  
Անմեղուքին ինքն է ինք,  
Զայն պարգեւեց ինձ երկինք:

Թող ալեակներ մեղմագին  
Պատեն նաւակն իր կեանքին.


Եւ ընթացփոխ շուս շուս  
Թռչի քեքել խուքի խուք:

Զէ այգուն ջան վառ ի վառ  
Ինձ իր աչիկն պէս պայծառ.  
Եւ ոչ գոհար քանկազին  
Փայլի ինչպէս իր հոգին:

Վրձիւնով մը լուսազիծ  
Նկարուած է դեմքն անբիծ.  
Համբո՛յր պայծառ իր նակսին,  
Տեսփովն հոգեր կ'անհետին:

Իր պաակերը սրսիս մեջ՝  
Տայ ինձ հրնուանք մը անվերջ.  
Ա՛խ, անուշիկն իր արեւ  
Թող չմթագնեն ամպեր սեւ:

Ս. ԴԱՐԱՄԱՋԵԱՆ



## ԲԱՐՈՅԱԿԱՆ ԵՒ ԳՈՐԾՆԱԿԱՆ

## ԴԵՍՏԻԱՐԱԿԱՆԻԹԻԻՆԸ

ԱՂՋԻԿՆԵՐՈՒ ՎԱՐԺԱՐԱՆԻ ՄԷՋ

« Հաստատել խորհրդու, զգալու  
գործելու սովորութիւններ. ահա  
անոր մէջն է ամբողջ դաստիարա-  
կութիւնը »:

Ա. — ԿԵԱՆՔՆ ԸՆՏԱՆԻՔԻ ՄԷՋ

1. ԸՆՏԱՆԻՔ ԻՄ ՈՒՆԵՆԱԿԱՆ ԵՐՋԱՆԿՈՒՅԻՆՆԵՐ



Ազարակի մը մէջ աղջիկի  
մը տեսայ, զոր խեղճ  
գեղջկուհի մը կը պա-  
հէր մտորասիրաբար:  
Այն աղջիկը թարմ  
և առողջ էր: Կը թուէր  
թէ երջանիկ է. ցա-  
կայն զայն ճանչցող-  
ները երբ տեսնէին կը  
տիրէին: Գլուխին շարժելով կ'ըսէին.  
« Խեղճ տղայ, խեղճ տղայ »:

Ինչո՞ւ կը ցաւէին վրան. — որովհետեւ  
ընտանեզուրկ մ'եր. հայր մայր չուներ:

Ընտանեզուրկ տղան ամենաթշուառն է  
տղոց մէջ, անոր անձանթ են ընտանեկան  
յարկի ուրախութիւնը, իրեն կեանք տուող-  
ներէն խնամուելու, պաշտպանուելու, և սը-  
նանելու երջանկութիւնը:

Տղա՛ք, խորհեցէ՛ք այն խեղճ աղջկան  
վրայ, եւ ընտանիք մ'ունենալու երջանկու-  
թիւնը վայելեցե՛ք:

2. Տղայ մ'ինչպէս կը յայտնէ իր

ճնողքին քե կը սիրէ զիրենց

Վարդուհին շատ խանդաղատանք ունի  
իր մօրը և հօրը համար, իրեն մեծ ուրա-  
խութիւն է շատ անգամ զանոնք համբու-  
րել և ըսել թէ շատ կը սիրէ: Բայց երբ  
մայրը պէտք ունի անոր օգնութեան, կամ  
հայրը բան մը կ'ուզէ՝ որով փոքրիկին խա-  
ղերը կ'ընդհատուին, ահա այն ատեն Վար-

դուհին քիթը կը կախէ և հագիւ հագ կը  
հնազանդի:

Հաւատացէ՛ք որ Վարդուհին իր ըսածին  
չափ չսիրեր իր ծնողքը, և որչա՛փ տղաք  
կան անոր պէս:

Եթէ դուք շատ կը սիրէք ձեր ծնողքը,  
այս աղջիկէն տարբեր կերպով պիտի վար-  
ուիք: Դուք ուշադիր պիտի լինիք այն ա-  
մէն բանին, որ կ'ընայ զանոնք ուրախա-  
ցընել եւ հաճոյք պատճառել անոնց: Պիտի  
հնազանդիք անմիջապէս եւ ուրախութեամբ:  
Անոնց աշխատութեան պիտի օգնէք որչափ  
կը ներեն ձեր տարիքն եւ ուժը: Վարդու-  
հին պէս հաճելի պիտի լինի ձեր սէրը ա-  
նոնց յայտնել. մանաւանդ գործով պէտք է  
յայտնե՛ք ձեր սերն ու խանդաղատանքը:

3. Ի՞նչ կ'ընէ մայրը սիրող հղան

Պզտիկ աղջիկնե՛ր, գիտէ՛ք ինչպէ՞ս պէտք  
է յայտնէք ձեր մօրն այն մեծ և բուռն սէրը,  
զոր ունիք ձեր սրտին մէջ:

Ահա թէ ի՞նչ պիտի ընէք:

Առաւօտուն, արթննալուն պէս պիտի՛նչ-  
նէք ու անմիջապէս հագուիք: Կանոնաւոր  
կերպով պիտի յարգարէք ձեր սենեակը,  
անկողինը, եւ այն հագուստները, որ նոյն  
օրը չպիտի հագնիք՝ տեղը դնէք: Դըպ-  
րոցէ ելած ժամանակ փութով տուն պիտի  
դառնաք ձեր մօրը քով առանց փողոցները  
եւ ճանապարհին ուշանալու: Պիտի զգու-  
շանաք ձեր հագուստներն ազտտուելէ կամ  
պատուելէ, որ ձեր մայրն այնչափ նեղու-  
թիւն կրած է լուալու, կարելու եւ կարկը-  
տելու համար: Առտնին գործերուն մէջ պի-  
տի օգնէք անոր, եթէ պատահի որ ձեզ  
զրկէ բան մը քնելու կամ ո՛ր եւ է յանձնա-  
րարութիւն մ'ընէ՝ ուրախութեամբ պիտի  
կատարէք: Եթէ ձեզմէ փոքր եղբայրներ  
կամ քոյրեր ունիք, անոնց հոգ պիտի տա-  
նիք ձեր մօրը պէս:

Սիրելի փոքրիկ աղջիկնե՛ր, եթէ այս ա-  
մէնը կ'ընէք դարձեալ գիտցէ՛ք որ չե՛ք կըր-  
նար ձեր մայրն այնչափ սիրել, որչափ որ ան  
ձեզ կը սիրէ:

4. Ձեր հայրը

Երբ դուք զարթոնք էք ու կը սորվիք ա-  
ռանց յոգնելու եւ կամ երբ զբօսանքի ժա-

մանակ կը խաղաք, ձեր հայրը կ'աշխատի ձեզի համար:

Նա երբեմն շատ ծանր կամ վտանգաւոր աշխատութիւններ կ'ընէ եւ տոմարներու եւ թղթերու վրայ ծռած դժուար հաշիւներու մէջ ընկղմած է. մէկ խօսքով առաւօտէն մինչեւ երեկոյ կ'աշխատի թէ՛ ձեզի եւ թէ՛ ամբողջ ընտանիքին համար, որպէս զի պէտք եղածը հայթայթէ:

Ամէնէն առաջ արթննալ, ամէնէն վերջը պառկիլ, ահա իր վարած կեանքը, որ ուրախ չէ. իր ամենամեծ երջանկութիւնը կը կայանայ իր գաւաղներուն պատճառած ուրախութեան մէջ. ուստի խորհեցէք թէ որչափ պարտական էք ձեր սէրը, խանդավառութեամբ անոր ցուցնելու:

Երեկոյին տուն դարձածին պէս զիմաւորեցէք, եթէ որ եւ է բան մը ունի ձեռքը՝ անմիջապէս առէք որ հանգստանայ, նայեցէք որ սեղանը շուտով եւ հաճելի կերպով պատրաստէք:

Ձեր հօր մէկ գոհունակ ակնարկը ձեր ամենամեծ վարձատրութիւնը պիտի լինի այդ փոքրիկ հոգատարութիւններուն համար:

##### 5. Մամեր, Պապեր

Մեր մամերը, պապերը ծերացած են ընտանիքին համար ըրած աշխատութիւններուն եւ տարած խնամքներուն համար: Անոնք մեծցուցած են մեր հայրը կամ մայրը, մեզ եւս խնամած են մեր փոքր եղած ժամանակը, եւ նոյն իսկ այսօր ուրիշ ուրախութիւն չունին եթէ ոչ զմեզ երջանիկ, ուրախ եւ առողջ տեսնել:

Սիրելի ծերունիներ, գրեթէ աչքերնին այլ չտեսներ, քալուածքնին առաջուան պէս ուղիղ չէ, այլ եւս առաջուան ոյժը չունին եւ կամաց կամաց, հանդարտութեամբ իրենց կեանքի վախճանին կը հասնին:


Քաղցրացնենք իրենց ծերութեան, աւաղ, համբուած օրերը: Մարդասէր գտնելովնք իրենց տկարութիւններուն հանդէպ. երբեք չձաղրենք իրենց մալութիւնները, երբ մենք ալ ծերանանք (որովհետեւ մեզի ալ պիտի դայ ծերութիւնը), թերեւս աւելի ծաղրելի լանք ունենանք: Մեզի պարտականութիւն համարինք անոնց փափաքները կատարել, շրջադայութեան ատեն թեւեր-

նին բռնենք, իրենց յանձնարարութիւնները սիրով կատարենք, իրենց քով նստինք հետերնին խօսինք:

Պզտիկ աղջկան մը սիրտը կը ճանցցուի, ծերունիներուն ցուցուցած սիրովն ու յարգանքովը:

Կարին

Թրգմ. Փեփրոնէ ՀԱՉԱՐԱՊԵՏԵԱՆ



##### ԱՆՓՈՐՁ ԴԵՂՁԱՆԻԿԸ

Փոքրիկ դեղձանիկ մը, որուն թեւերը դեռ նոր կը վարժուէին թռչելու, ամէն առաւօտ իրենց բոյնին չորս կողմը թռչելու վարժութիւն կ'ընէր: Երբոր բաւական մեծցաւ, ըսաւ ինքնիրեն. ինչո՞ւ ես իմ հօրս ու մօրս քով կենամ, կ'երթամ ծառի մը վրայ բոյն մը կը շինեմ: Միտքը դրածը կատարեց:

Գնաց բարձր կաղնիի ծառ մը գտաւ ու անոր կատարին վրայ բոյնը շինեց: Յաճախ կը ծաղրէր այն դեղձանիկները՝ որոնք իրմէ շատ ցած տեղեր բոյն չինած էին: Օրին մէկը, իր բացակայութեան ժամանակ, կայծակ մը գալով կաղնին տապալեց. Դեղձանիկը երբ երեկոյին վերադարձաւ, տեսաւ որ բոյնին մէկ փշուրն անգամ չիկայ: Խեղճը երբայ տեսաւ խելքը գլխէն գնաց: Բայց ինչ օգուտ: Այս անգամ ալ գետնի վրայ չինեց: Բայց առաւօտ մը կանուխ անօթի ազուէս մը կը պտտէր, նա դեղձանիկին բոյնը տեսաւ, որուն մէջ կային քանի մը հաւկիթներ, անոր ալ ուզածը այդ էր, հաւկիթները կերաւ, բոյնն ալ քակեց ու գնաց: 'Դեղձանիկը ծանձրացած' ուղեց անտառը բնակիլ, ուստի գնաց ծառ մը գտաւ, որ ոչ բարձր էր եւ ոչ ալ ցած. չինեց իր բոյնը եւ սկսաւ խալաղ կեանք մը անցնել: Այս անգամուան ընտրած տեղը շատ դեղեցիկ էր, առողջարար օդ ունէր եւ հիանալի ջուր մը: Քանի մը քայլ անդին կը գտնուէր ընդարձակ դաշտ մը, գոյնզգոյն ծաղիկներով լեցուն, ուր կ'երթար ամէն օր իր պարէնը հայթայթելու:

Սիրելի ընթերցողներ, այս փոքրիկ պատմութենէն սա բարոյականը կ'եղնէ ձեզ, երջանկութիւնը միջտկութեան մէջն է. եւ արդէն կեանքի մէջ ալ այսպէս չէ՞:

Սըլաս

ՆՇԱՆ Օ. ԵԱՅԼԱՆԵԱՆ  
Աշակ. ազգ. երկսեռ դպրոցի



### ՄԱՆԿԱԿԱՆ ՅԻՇԱՏԱԿՆԵՐ

#### Ի Մ Ա Ռ Ա Ջ Ի Ն Ս Ի Կ Ա Ռ Ս

Դեռ հազիւ կայի տար տարեկան,  
— Խիստ հետաքրքիր մանուկներ տաս կ'ան  
Որոնք մահուան զոհ պիտի չերթային  
Երբ՝ խրատուց քիչ մ'ականջ կախեին —  
Երբ ես անցուցի մի ծանր փորձանք,  
Այս ալ չլուռնամ քե՛ իմս եր յանձանք:

Ամեն մարդ գիտէ քե՛ ի՞նչ է ծխել.  
« Օղէն օդ գնել ու օդը ծախել ».  
Ըստ իս մեղք ձեզի երբ դրամ տալ  
Այսպիսի օղին որ չարժէր տալ:

Տեսայ որ տասերն քողիկ կը գնեն,  
Ծխախոտ կ'առնուն սիկատ մը կ'ընեն,  
Վառեն, կը ծխեն, բերեն հանեն մուխ  
Երբեմն անմալ երբեմն ալ խիստ քուխ:  
Շատ կը բաղձայի ծխել մի սիկատ.  
Արդեօք տոյն օղին մեզը տան մը կա՞ր...  
Բաղձանքիս հասայ բայց հարցուր ինչպե՞ս...  
Քեզ պատմեմ Արամ, զարհուրէ ու տես:

Արդեն մեր սնեն ոչ ոք կը ծխեր  
Վասն զի չիկայ անկից շահ եւ խեր  
Ստակ ալ չունիմ ի՞նչ պէտք է բնել  
Ուրպէս զի սիկառ կարենամ գտնել :

Այս անգուստ փափաք մինչեւ գողութեան  
Դուռը զիս տարաւ , ա՛յս քե՛զ անպիտան .  
Կամաց մը գիշերն հօրս քանկեմ  
Ստակ շորքեցի ու ելայ քանկեմ .  
Հետեւեալ անուրն դեռ նոր լուսնցած  
Դեռ ժամը հագիւ կեսըն եր անցած ,  
Պայուսակս առի դպրոց երթալու  
Իբրեւ քէ հոնցեղ համար , դաս տալու —  
Շուտով մը գացի ծխախոտ առի ,  
Տասնոցի մ'ալ բուրբ գրպանըս դրի ,  
Անկիւն մը գտայ :

Սանկ մեջը մտայ ,

Սկսայ ուրախ ոլորել սիկառ .  
Արդեօք ինձ նման երջանիկ մը կա՞ր...  
Անվարժ մտերով սիկառըս եղաւ .  
Մի միայն մնաց գայն վառելըն . լա՛ւ ,  
Անշուտ ան ալ ինձ Աստուած կը հոգար  
Անկից առելի դիւրին բան մը կա՞ր...  
Սիկառն ի ձեռքն մարդուկ մը տեսայ  
« Բարի լոյս » ըսի իրեն մօտեցայ ,  
Սիկառս իմէ վառել ուզեցի  
« Ա՛յս չարանքի , արժանի ձեռքի » ,  
Ըսաւ ու հուժկու ապսակ մը տուաւ  
Ըսէ իմ արժանեացս վարձն եր շատ լաւ :  
Իսկոյն ծաղկեցաւ դիմքս վրայ վարդ ,  
Ալ մտածե դուրն ի՞նչ կ'ըլլայ հոս մարդ  
Երբ կը տեսնէ իր ծանօթ բարեկամ  
Մակէ ծակ մտնէ ամեն մէկ անգամ :

Բարեբաղդաբար խանութի դրան  
Առջեւն եր դուռն մի կ'ընկարան .  
Խոնոր քայլերով դէպ ի հոն գացի ,  
Իսկոյն սիկառիս տիրեմ բացի .  
Հագիւ վառեցաւ տարն անգամեն  
Սկսաւ միայլ : Սիկառիս համէն  
Ոչինչ կ'զգայի , սակայն խմէի ,  
Մերք երկու մասիս մեջեղ սեղմէի  
Քիչ մը կը բախէ ու վերջը նորէն  
Բերանս առնուի սեգ հպարտօրէն .  
Բայց խանութի հոս կայ արդեօք ի՞նչ կ'այրի...  
Իսկոյն վերցուցի ալաղակ վայրի .  
« Օգնութեան հասեմ , կ'այրիմ » կանչէի  
Հոս հպարտ ծխողն երբեք , ան չէի .  
Վերադառնալ կ'այրէր , քափառս բռնկէր ,

Ախտո՛ւ , կ'ըլլայի հոյն ճարակ , կեր .  
Շուտով վազեցի ուղղակի քարափ ,  
Վիճակս կ'ազդէր ամենուն սարսափ .  
Ինքզինքս իսկոյն ծովը նետեցի՝  
Այն օրէն ի վեր սիկառն անցի :  
Շատ շուտ պրծեցայ հոյն նիւանէն ,  
Բայց ոչ դիւրաւ զիս ջրէն կը հանեն :  
Մեկ երկու ամիս հիւանդ պառկեցայ ,  
Խօսքիս վրայ ես հաստատուն կեցայ  
Ու մինչեւ այսօր ծուխ մուխ չեմ գիտեր  
Նայէ որ դուրն եւս խօսքիդ ըլլաս տէր :

Թ. Կ. ՆԻԿՈՂՈՍԵԱՆ


### Գ Ա Ռ Ն Ո Ւ Կ Ս

« Սիրելի՛ գառնուկս , որչափ կը սիրեմ  
քեզ , կ'ընէր օր մը սիրուն տղայ մը : Ես  
չառ տառնէի ի վեր կը փափաքէի ունենալ  
քեզ , կամ քու յեղէնը մէկը , որովհետեւ  
դուք հեզ բնավորութեամբ , խոնարհ որտով  
կենդանիներ էք : Հայրս շատ անգամ խոս-  
տացած էր ինձի որ հառ մը գնէ , բայց չեմ  
դիտեր թէ ինչո՞ւ այսչափ ուշացուց , շատ  
կարեղի է մտցած ըլլայ : Ես ուղեցի ունե-  
նալ քեզ , սիրելի գառնուկս , երբ որ լսեցի  
քու վրայով որ դուրն շուտ կը վարժուիս ե-  
ղեր քու տիրոջ , մանաւանդ ինձ նման փա-  
փաքող մանչերու , որոնք իրենցմէ աւելի  
քու կերակուրիդ ու ջուրիդ հոգ կը տանին .  
ես ալ հիմա որ կը վայելեմ քեզ , պիտի պը-  
տուցնեմ դաշտերը ու լեռները : Աղուորի՛կ  
գառնուկս , անցեալ օր հայրիկս պատմեց ինձ  
ձեր ըրած ու մատակարարած օգուտները  
մարդկութեան : Ձեր մարթը , զոր հիմա ես  
կը շոյեմ ու կը սիրեմ , մեր կերպասներուն  
ու հագուստներուն նախնական վիճակն է :  
Ձեր միտք մեր ամենօրեայ սեղանին կերա-  
կուրներն է . ձեր համեղ կաթը մեր առ-  
տուան նախաճաշին եւ վերջապէս ձեր օ-  
գուտը շատ է մարդկային ազգին համար :  
Բայց մի՛ վախճար , խառնուրդ ոչխարս ,  
ես քու կեանքիդ վերջ տալ չեմ ուզեր այս  
նիւթական օգուտներուն համար . կը զուար-  
ճանամ երբ տեսնեմ քու կերակուր ուտելը ,  
կը կարծեմ թէ շնորհակալութեան նշան մըն  
ալ կը ցցնես գլուխդ շարժելով , եւ միշտ  
կ'ուզես որ քովդ գտնուիմ : Ես ալ շատ կը

սիրեմքով մնալ, երբ որ դուրս ելլեմք փեղ հօրս հրամանը կատարելու համար, կը մայես եւ ինձ ալ այնպէս կուգայ թէ կուլաս ետեւէս, ես ալ չեմ ուզեր քեզ լացընել, որով շատ անգամ արգելք ալ կ'ըլլաս իմ պարտքս կատարելու. գիտեմ, չես ուզեր որ ես հօրս հրամանին ըմբոստ գտնուիմ, սակայն չես գիտեր թէ ինչո՞ւ կ'երթամ երբ կը մայես: Քեզ կը ներեմ այս յանցանքիդ համար, ինչպէս որ հայրս ալ կը ներէ իմ թերութիւններուս: Հիմա հասկցա՞ր դառնուկս, քեզ շատ կը սիրեմ, բայց աւելի դուլելի ու նախանձելի բան մը կայ որ զիս կը դրդէ աւելի սիրելու: Մեր Տէրը Յիսուս իր Ս. Աւետարանին մէջ բոլոր մարդիկը ձեզի կը նմանցնէ, այսինքն գառնուկ անունը կուտայ, մեր Փրկիչն ալ հաւանած է ձերին հեզ բնաւորութեանը եւ մեզի ալ կը պատուիրէ որ խոնարհ ու հեզ ըլլանք գառնուկներու պէս: Հիմա հասկցա՞ր, ասոր համար քեզի ունենալ կը փափաքէի, մանաւանդ ինքը Յիսուս ալ իբրեւ Աստուծոյ գառն մեր մեղքին համար մեռաւ:

ՄԵԼԴՈՆ ՄԷՔԷՆՆԱՆ

Իբրանոսեան վարժ. Գ. տարիի աշակ.



### ՀԱՐՈՒՍՏԻՆ ԵՒ ԱՂՔԱՏԻՆ ՏՂԱՆ

Աղքատի զաւա՛կ, դուն քու վիճակէդ գոհ չես եւ շատ կը բաղձաս հարուստին տըղուն վիճակին, կը կարծես թէ հարուստին տղան ալ բոլորովին երջանիկ ըլլայ. ինքն ալ քու վիճակէդ կը նախանձի: Բնա՛ւ, իրերը իրենց արտաքին երեւոյթէն մի՛ դատէր: Հարուստ մարդու մը ջերոցին մէջ տեսայ հազուադիւտ տունի մը, զոր մարդը դրամի զօրութեամբ հոն բերել տուած էր: Ամէն օր պարտիգպաններ կուգային եւ զայն կը ջրէին, անոր տերեւները կը մաքրէին, եւ շատ հոգածու էին բարեխառնութեանը միօրինակութեան, վախճալով թէ մի՛ գուցէ նա սաստիկ տաքէն եւ կամ ցուրտէն չորնայ:

Ջերոցէն դուրս հանեցին այդ բոյսը, հազիւ կէս ժամ անցաւ եւ ահա իր գեղեցիկ տերեւները թօշնեցան, երեկոյեան հովը

իր նորարոյս կոկոնները եւ ձողունը ասդին անդին ցիրուցան ըրաւ:

Հարուստի զաւա՛կ, զգուշացիր նմանիլ ջերոցին այս փափուկ բոյսին. անոր պէս քեզի ալ ամէն օր եւ ամէն վայրկեան ամէն տեսակ փորձանքներ պատրաստ են: Բերնէ՛ք ելած ամէնափոքր բաղձանքդ նոյն վայրկեանին կը կատարուի, միշտ փափուկ, ու միշտ հանգստութիւն սպառնացին քու ետդ ոչնչացնել, այնպէս որ ժամանակ մը ամէն տեսակ հաճոյքները վայելած՝ ա՛լ բընաւ բաղձանք ըսուած բանը չունեցար: Ուրեմն, ո՞վ խնամուած բոյս, դուն որ ամէն խնամք ուրիշներէ կ'ընդունիս, ամենափոքր դժուարութիւն կարող պիտի ըլլայ քեզ ոչնչացնել:

Դո՛ւն, աղքատի զաւա՛կ, շատ իրաւամբ կը նմանիս մատղաշ կաղնիի մը, որ իր արմատները հաստատած է քարուտ եւ անրեր վայր մը, փոթորիկը զայն կը սարսէ, բայց նա իր արմատները աւելի հողին մէջ խորունկ կը թալէ, որպէս զի բնութեան դէմ կռուի: Եւ ահա հիմա նա արեւէն ու անձրեւէն պաշտպանուած կ'ուռնի եւ կը բազմանայ:

Թո՛ղ քու կեանքդ ասոր նմանի, աղքատի զաւա՛կ, որովհետեւ այն մարդը որ կաղնիի պէս ինքնօգնութեամբ կը մեծնայ, աւելի կը բարձրանայ քան այն՝ որ ուրիշի մը պէտքը կ'զգայ զարգանալու համար:

Միշտ աշխատէ՛, վասն զի աշխատութիւնը եւ յարատեւութիւնը մարդուս կամքը ու մարմինը կը զօրացնեն. մարդ՝ որ քան խոնարհի՛ այնքան կը բարձրանայ, եւ այն է որ մեծ սիրտ մը կը կրէ:

Թարգմ.

ՆՈՒ ՄԷՆ



### ՉԱՐ ԸՆԿԵՐԻՆ ԱԶԴԵՑՈՒԹԻՒՆԸ

Հազիւ հինգ տարեկան էր Գրիգորիկ, գողտրիկ ու թոմպուրիկ, օրինակ անմեղութեան, իսկատիպ խօսհրդատիպար խոնարհութեան: Գերագոյն երանութեան մը մըտաւիպարը կը կրէր Գրիգորիկ:

Աչքեր վառվռուն ու փափառ, օրոնցմէ կ'արտափայլէր կարծես յաւիտեանական եղբայրութիւնը: Ան ամբողջ էութիւնովը ան-

մեղութեան աշխարհէն, մանկացած Յիսուսի քովէն գալը կը բացայայտէր վերջապէս:

\* \* \*

Անցան տասնըհինգ տարիներ անմեղութեան, երբ այլ եւս սկսեց ան թեւակոխել իրական աշխարհը, ահա ան ատեն սկսան չար ընկերներ ալ մտնել ալ եւ մտերմութիւն հաստատել անոր հետ:

Թէ եւ Գրգորիկ քրիստոնեայ գերդաստանէ սերած ըլլալով՝ անոր մայրը քրիստոնէութեան բարոյացուցիչ սկզբունքներով զայն հրահանգել զանց չէր բրած, և թէպէտ անոր հայրը հնչեցուցած էր շարունակարար անոր ականջին հետեւեալ խօսքերը:

« Տղա՛ս, եթէ ձիւն-ծաղիկը մանիշակին քովը դնես, անոր հոտը առնելով կ'սկսի մանիշականման անուշիկ բուրու մտեր արձակել: Բայց եթէ նոյն ծաղիկը գարահոտ խոտի մը քով դնես զպղիւր բուրումներ կ'արձակէ: Այսպէս ալ եթէ մարդիկ բարի ընկերներու հետ տեսակցին, իրենք ալ անոնց նման բարի կ'ըլլան, բայց եթէ չարերու հետ իյնան ելլեն՝ իրենք ալ անոնց նման չար կ'ըլլան: Թէպէտ եւ չեն զգար իրենք առաջին անգամ, որովհետեւ հանգարտ ջուրի վրայ նաւարկողը առաջին անգամ չ'զգար թէ վարը ջրվէժ կայ »:

Սակայն Գրիգորիկ կը խորհէր թէ աղէկ չէ վերջապէս ընկերի մը սիրտը ցաւցնելը, կ'ըսէր. հօրս խօսքին կ'անսամ մի եւ նոյն ատեն ընկերներս ալ չեմ վշտացնէր:

Տաճատ որ չար տղայ մըն էր, մտեցաւ որ մը Գրիգորիկին եւ ըսաւ. « Եկո՛ւր, Գրիգորիկ, երթանք զուարճանանք դալարաւէտ մարգագետինին վրայ, արեւը պայծառ է, եւ թռչնիկները կը ճըճըճան անուշիկ դալալիկներով, մեզ կ'սպասեն նաեւ Զարեհ եւ Արշամ, օ՛հ, երթանք ուրեմն »:

Թէպէտ եւ Գրիգորիկ քաջ գիտեր թէ Տաճատ չար տղայ մըն էր, սակայն ինքնիրեն այսպէս կը խորհէր.

— Հոգ չէ, ես կարելի եղածին չափ ըզգոյշ կ'ըլլամ, թէ եւ անոնց կ'ընկերանամ, սակայն անոնց պէս գէշ խօսքեր չեմ արտասանէր, չար խորհուրդներ չեմ ունենար: Զեռք ձեռք տուած Տաճատ եւ Գրիգորիկ կ'ընկերանան հոն ուր Զարեհ եւ Արշամ կը սպասէին անոնց:

Կ'սկսին նախ անմեղուկ զուարճութիւններ. ծառերէն ոտներ կտրելով կանաչադարձ գետինն վրայ կը խայտային ու կը վազվզէին հոս հոն: Մէջերնուն Տաճատ յանկարծ առաջարկ մը կ'ընէ.

— Տղա՛ք, բաւական յոգնեցանք, եկէք քիչ մը հանգիստ առնենք աս ընկուզենիին տակ:

— Այո՛, կ'ըսեն միաձայն հաւանութեամբ:

— Տեսէք սա չորցած գօս տերեւներն ալ որչա՛փ նմանութիւն ունին ծխախոտի, կ'ըսէ Զարեհ:

— Հա՛, հա՛, հա՛, իրաւ Տաճատ, շատ սրամիտ ես, կ'ըսեն ամէնք:

Կ'սկսին այնուհետեւ գօս տերեւներ վրջրելով թուղթի մէջ պլլել եւ ծխել, իբր թէ մեծ մարդոց նմանութիւնը ըրած ըլլան:

Ամէն օր որոշեալ ժամուն սովոր էին այսպէս զբօսանքի ժամեր տեղի ունենալ, եւ երբ օր մը Տաճատ ըսաւ վերջապէս.

— Ընկերներ, ալ այսօր չոր տերեւ չի պիտի ծխենք. հայրիկիս տուփէն ծխախոտ առի առանց ինք տեսնելու, նաեւ փոքրիկ շիշ մը ընտիր օղի. երբ հայրս սեղանին վրայ հիւրերուն հետ ուրախութիւն ընելով հիւրանոց գացած էր:

— Գիտէ՞ք, մեծերը ի՞նչ կ'անուանեն այդ գոչեց Զարեհ:

— Կոամբամբուլի՛, պատասխանեց Արշամ: Պարզ ընկերական տեսակցութիւնը զեղի խրախճանքի մը ձեւը առած էր, այնպէս որ օղին էր այլ եւս տեսակցութեան համն ու հոտը:

\* \* \*

Բոլորեցան տասը տարիներ ալ, երբ Գրիգորիկ պատանեկութեան շրջանը շատոնց բոլորած երիտասարդութեան մէջ ալ հսկայ քայլեր առած էր, Մոլութիւնը, սակայն, տարտարոսային այս մոլութիւնը բոյն դրած էր անոր մտքին մէջ, եւ դրոշմած էր անոր ձախտին վրայ անմահական տառերով քրօնառութիւն եւ կոռուս:

Գրիգորիկ, գերի ոգելից ըմպելեաց, չէր դադրէր գինետուններ, սրճարաններ յաճախելէ, սակայն առայժմ գաղտագողի եւ կարելի եղած վերապահութեամբ:

\* \* \*

Ընտանիքի գլուխ անցած Գրիգորիկ, ունէր երեք պճիկներ սիրուն, սակայն գերիօղիին, ալ հիմա յայտ եւ բացայայտ. օղի՛, օղի՛, չունի աշխարհ հրապոյր իրեն համար, այլ միայն օղին, կ'ուզէ որ մինչեւ իսկ կարասներ հսկեն մօտ սնարին:

Գարնան իրիկուն մըն էր: Արեւը իր վերջին հրաժեշտը կուտար հողագնտիս առժամանակեայ բացակայութեան մը համար:

Այս պահուն ամէն տնակ պարտի իր հանգիստն ունենալ, թռչնիկն իր բոյնը, աղուէսն իր որջը, առիւծն իր այրը եւ մարդարարածը ընկերական սուրբ եւ նուիրական յարկը:

Ուստի շուկայէն կամ վաճառանոցէն ամէն մարդ կը չուէ դէպ իր տունը: Այս պահուն, ի՛նչ կը տեսնես, ահա պատին կը թընամ մէկը ուռուցիկ աչերով, թափթփած մազերով, ջլատ ու դողդոջ քայլերով, ամենէ ալիքներու մատնուած, հոսանքներու խաղալիք դարձած լաստափայտի նման կը տատանէր ան՝ ճաթած ձայնով վայնասունի ճիշեր արձակելով, — մոլի՛ն Գրիգորիկը:

Ամբոխէն խղճամիտ անձնաւորութիւններ սրտատոջոր եղած այսպիսի քիթոխային տեսարանէ մը կը բռնեն անոր ձեռքէն եւ կը տանին զայն տուն թաւալգլոր:

Հէ՛ք կին, քանի արեւը իր սիգաքայլ արշաւը շարունակէր դէպ արեւմուտք, այնքան կը բազմապատկուէր անոր սրտին տըրփումը, լանջքի բարախումը. վասն զի արեւին յաջորդող խաւարին հետ կանխահաս պիտի գար սրտի խաւարն ալ, — ամուսինը: Միշտ ունէր նա խղճի խայթ մը, սրտի կըրակ մը, որ կ'այրէր ո՛ւր կը մրկէր զայն, — ամուսինը, Գրիգորիկը:

Յորեկ ատեն ամուսնոյն բացակայութեամբ զինքը չըջապատող երեք հատ պճըլիկներուն անմեղուկ ճիւճիւներով կը մեղմանար քիչ մը իր դառնակսկիծ վիշտը (երբ ունէին փոքրիկները օրական հաց ուտելու):

Վերջապէս դուռը կը զարնուի յանկարծ, կինը սարսափահար կը վազէ ու կը բանայ դուռը: Ամուսինն է որ կ'երկնայ սեմին վըրայ կիսամեռ:

Ո՛հ, ո՞վ կարող է բացատրել այս պահուսն ընտանեայրկին վրդովն ու տագնապը: Մանկիկներուն մեղանուշ ճիւճիւները կը վերածուին մեռելատիպ լռութեան մը: Մինակ

հեզիկ հեզիկ նայուածքներ կ'ուղղեն դէպ իրենց հայրիկը, եւ փոխադարձ կ'ընդունին խոժոռ նայուածքներ:

Դիտենք պահ մըն ալ անոր դէմքը: Դուրս ցցուած մթագնած աչքեր կը տեսնուին բարկացայտ: Խորշոմած այտեր ցոփութեան ահօսեր կը բացայայտեն: Ջլատ, դողդոջ ծունկեր, ուժաթափ ձեռներ, որոնք ճարահատ շարժումներ կ'ընեն: Վերջապէս հրէշի մը ճշգրիտ տիպարը կը կրէ ան. կը ցնցուիս, կարծես ելեքտրական ցնցումով մը տեսնելուդ պէս այս ճիւղը:


Հազիւ թէ գիշերուան քանի մը ժամերը կ'անցնին, սաստիկ խիթի մը, փորացաւի մը կը բռնուի ան: Հետեւեալ առաւօտ բժիշկը կուգայ եւ կ'ըսէ, հազիւ քանի մը ժամեր ալ ունի, որովհետեւ ոգելից ըմպելիներ փտեցուցած են մարտողական գործարաններն ու աղիքները:

Վերջին շունչին սա խօսքերը միայն կըրցաւ կէս մը արտատունել, « Տա... ճատ, Զա... բեհ, Ա՛ր... շամ, ա՛խ... դուք: »

Ահա, ժամանակուս անմեղ Գրիգորիկը, պատրաստ աճիւնի եւ մոխրի վերածուելու: Տղա՛ք, կ'ուզէ՞ք չարերուն ընկերանալ:

Մարգուան

ԿԱՐԱՊԵՏ Գ. ԳՕՃԱԵԱՆ



Գ. Ի Տ Ա Կ Ա Ն Վ Է Պ

Ժ Ի Ի Ա Վ Է Ր Ն

ՈՒՂԵՒՈՐՈՒԹԻՒՆ

ԴԵՊԻ ԵՐԿՐԻՍ ԿԵԴՐՈՆԸ

(Շարունակութիւն 15րդ քիւնճ)

ԺԹ.

Յաջորդ օրը, Յունիս 30ին, նորէն սկըսանք իջնել:

Միշտ լավայի ճամբուն կը հետեւէինք որ տեսակ մը բնական ստնդուդ կը ձեւացնէր: Այսպէս շարունակեցինք՝ մինչեւ կէս օրը 17 վայրկեան անցած, ճիշդ, երբ խանդ առաւ:


— Ահ, գոչեց հօրեղբայրս, ճամբուն ծայրը հասեր ենք:

Չորս կողմս նայեցայ: Առջեւնիս երկու նոր ճամբայ կը բացուէին, երկուքն ալ մութ ու խաւարոյտին: Ո՞րը ընտրելու էր. ահա՛ դժուարութիւն մը. սակայն հօրեղբայրս չուզեց վարանիլ ոչ իմ եւ ոչ Հանսի առջև, դէպ ի արեւելք բացուող ճամբան ցուցուց և երեքս ալ մէջը մտանք: Արդէն այս կրկին

ձեւերուն վրայ՝ որոց հիմն է հաւկթածեւը: Փարսախ մը անդին, կրանիթէ ձեղունը կը ցածնար ու հազիւ թէ ծունգի վրայ քալելով կրնայինք անցնիլ:

Տաքութիւնը բնաւ անտանելի չէր, աւաւայ կը խորհէի այն սոսկալի տաքին վրայ՝ երբ Անէֆէլաի դուրս տուած լավաները կ'անցնէին այսօրուան հանդարտիկ անցքէն:

— Ձեռլայ ծերուկ հրաբուխին մէկ քմա-



ուղիներուն չառջև վարանիլը՝ յաւիտեան հոն մնալ էր, քանի որ չկար նշան ցուցնելու թէ անոնցմէ ո՞րն է շիտակ ճամբան:

Այս նոր դետնուղին շատ ծուռ չէր, լայնութիւնն ալ անհաւասար. երբեմն կամարներու շարք մը իրարու կը յաջորդէին նման գոթական մայր եկեղեցիներու դասը բռնող աղեղներուն, միջին դարու արուեստագէտները շատ բան կրնային սորվիլ անկէ կրօնական ճարտարապետութեան բոլոր

հաճոյքը բռնէ: Կը մտածէի ինքնիրենս. ու թէև հօրեղբորս բան մը չէի ըսեր, որովհետեւ չպիտի հասկնար. իր միակ մտածումն էր, յառաջ երթալ: Կը քալէր, փորի վրայ կը քշուէր, երբեմն ալ վար կ'իյնար, միշտ հաստատամտութեամբ մը, հաւատքով մը, որու վրայ սքանչանալու էի:

Իրիկուան 12ին, հօրեղբայրս դադարի նշան տուաւ, շուտով ճաշերնիս ըրինք ու պառկեցանք. անկողիննիս շատ պարզ էր,

ճամբորդութեան վերմակ մը ուր մէջ կը փաթտուէինք. ահա՛ ասէնք:

Յաջորդ առաւօտուն արթնցանք թարմ ու պատրաստ, ու նորէն ձեռք առինք առջի օրուանին նման լավայէ ճամբանիս. գետնուղին փոխանակ դէպ ի երկրիս խորերը իջնելու, աւելի հորիզոնական դիրք մը կը բռնէր, նոյն իսկ ժամանակ մը սկսաւ վեր ելլել, անանկ որ չուտով յոգնեցայ:

— Ի՞նչ կ'ընես Ա. քսէլ, ըսաւ հօրեղբայրս անհամբեր:

— Յոգնեցայ, պատասխանեցի:

— Ի՛նչ, ասանկ դիւրին ճամբու մը վըրայ երեք ժամ քայլելէ ետքը:

— Ձեռքներ թէ դիւրին ճամբայ չէ, բայց կը յոգնեցնէ:

— Վար իջած ժամանակ մարդ կը յոգնի՞:

— Վեր ելած ժամանակ ըսէ՛ք:

— Վեր ելած, կրկնեց հօրեղբայրս ուսերը շարժելով:

— Անշուշտ, կէս ժամէ ի վեր դառնալը փոխուած է, եւ եթէ ասանկ շարունակէ իսլանտայի ցամաքը պիտի ելլենք:

Հօրեղբայրս հաւատալ չուզող մարդու մը պէս գլուխը շարժեց: Ուզեցի նորէն խօսակցութիւնը սկսիլ, բայց անիկա չպատասխանեց ու ճամբան շարունակեց: Հասկցայ որ լուրթիւնը սրտնեղութենէն յառաջ կուգար:

Այսու հանդերձ, բեռս կուսակա՞ քայլերս արագ արագ կ'առնէի, ետի չմնալու համար: Մեծ վախս՝ ճամբու ընկերներս աչքէ չհեռացնելն էր. սոսկալի կերպով կը վախնայի այս լաբլորինդոսին մէջ ճամբաս կորսնցնելէ: Մանաւանդ եթէ վեր բարձրացող ճամբան կը դժուարանար, միւս կողմէ ալ երկրիս մակերեսը թին աւելի կը մատկնար. հաճոյք կ'զգայի մտածելով թէ նորէն պիտի տեսնեմ պզտիկ Կրաիւպէնս:

Կէս օրին, գետնուղիին հողերուն երեւոյթը փոխուեցաւ, ելեքտրական լոյսին՝ պատերուն վրայ ցոլացումը քիչցաւ. կրանիթին յաջորդեց ժայռը: Ամբողջ լեռնակոյտը կը բաղկանար չեղ կամ ուղղահայեաց դիրքով խաւերէ. Սիւլուրեան չրջանի մէջ կազմուած հողերու առջեւ կը գտնուէինք:

« Անշուշտ, գոչեցի ինքնիքենս, չուրի մրուրները, երկրիս երկրորդ չրջանին մէջ կազմած են այս թերթաքարերը, կրաքա-

րերը, կոպիճները, կրանիթէ կոյտին ետեւէն կը դառնանք կոր »:

Տեսածներս՝ աղէկ կ'ընէի եթէ ինծի պահէի, բայց չիրցայ ինքզինքս զսպել: Հօրեղբայրս զարմացական աղաղակներս իմանալով՝ հարցուց.

— Ի՞նչ կ'ըլլաս կոր:

— Տեսէ՛ք, ըսի, եւ կոպիճի ու կրաքարի յաջորդական խաւերն ու հերձաքարի հողերու հետքերը ցուցուցի:

— Ստիկ ի՞նչ կ'ըլլայ:

— Ահա՛ այն չրջանին մէջ կը գտնուինք ուր առաջին բոյսերն ու կենդանիները ծընունդ առած են:

— Այդպէ՞ս կը կարծես:

— Բայց նայեցէ՛ք, քննեցէ՛ք, տեսէ՛ք: Եւ դասախօսը ստիպեցի որ լապտերը՝ գետնուղիին պատերուն վրայ պտտցնէ. կ'սպասէի որ զարմացման բացաղանջութիւն մը արձակէ, բայց բաց մը իսկ չըսաւ ու ճամբան շարունակեց:

Միտքս հասկցած էր թէ չէ: Արդեօք հօրեղբոր ու գիտունի անձնասիրութեամբը չէ՞ր ուղեր խոստովանիլ թէ արեւելեան գետնուղին ընտրելովը սխալած էր՝ քանի որ հիմակուան բռնած ճամբանիս Սնէֆէլսի վառարանին մէջ չէր կրնար առաջնորդել մեզի:

Սակայն ինքնիքենս կ'ըսէի թէ պէտք եղածէն աւելի կարեւորութիւն տուած չէի ըլլար այս հողի փոփոխութիւններուն. եւ միթէ չէի՞ խաբուէր թէ կրանիթին վրայ դրուած ժայռի խաւերու մէջէ կ'անցնինք:

Եթէ չեմ սխալիր, կը մտածէի ինքնիքենս, անպատճառ նախնական բոյսի մը մնացորդը պիտի գտնեմ, այն տունն ալ ըսելիք չմնար, ուրեմն փնտռենք:

Դեռ հարիւր քայլ չառած, խնդրած ապացոյցներս աչքիս առջեւ պարզուեցան: Եւ այսպէս ալ ըլլալու էր, քանի որ սիւլուրեան չրջանին՝ ծովուն մէջ 1500 տեսակէ աւելի բոյս ու կենդանի կար: Ծամբան մինչեւ հիմա կարծր կրանիթէ կազմուած, յանկարծ կախուղցաւ. բոյսերու եւ խեցիներու մնացորդներէ ձեւացած փոշիի մը մէջէն կը քայլէինք. պատերուն վրայ որոշակի կը տեսնուէր լուրջ եւ գետնամամուռի հետքեր: Լիտէնպորք ուսուցչապետը անշուշտ չէր կրնար սխալիլ ասոնք

տեսնելով, բայց կամաց մը տէքերը կը գո-  
ցէր ու անյողգողդ ճամբան կը շարունակէր:

Յամառութիւնը ծայր աստիճանի տանիլ  
էր այս, ա'լ չգիմացայ. նեպուկի նմանող  
կենդանիի մը խեցին վերցուցի գետնէն եւ  
հօրեղբօրս ետեւէն հասնելով ըսի իրեն.

— Տեսէ՛ք:

— Ի՛նչ է որ, պատասխանեց հանդար-  
տօրէն, հիմա տեսալը անհետացած եռա-  
խորշի մը կարգին պատկանող խեցեպատ-  
եանի մը խեցին է:

— Բայց ասկէ չէ՞ք հետեւցներ թէ...

— Կը հասկնամ ըսել ուղածդ, այո, ի-  
րաւունք ունիս, կրանիթէ խաւն ու լա-  
վայէ ճամբան ձգեցինք: Կարելի է որ սխա-  
լած եմ, բայց սխալելուս այն ատեն միայն  
վստահ պիտի ըլլամ, երբ որ այս ճամբուն  
ծայրը հասնիմ:


— Հօրեղբայրս, իրաւունք ունիք այս-  
պէս ընելու, ես ալ պիտի հաւանքի ատոր  
եթէ բանէ մը չվախնայի:

— Ինչէ՛ն:


— Զուրի պակսելէն:

— Այն ատեն չափով կը գործածենք:

Թարգմ. ԶԱՐԵՆ Ն. ՊԵՐՊԵՐԵԱՆ  
(Շարունակելի)



Ամէն բան յաւիտենական Աստուծոյ մը  
գոյութիւնը կը ցուցնէ, չենք կրնար զանի  
ուրանալ, չենք կրնար զանի անգիտանալ:  
Տիգրէքի ձայնը անոր կարողութիւնը կը  
յայտնէ եւ մեր սրտին ձայնը կ'ըսէ որ պէտք  
է պաշտել զանի:



## ԵՐԿՐԻՆ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒՄԸ

(Շարունակութ. 15րդ թիւէն)

Ուրիշ նշանաւոր պարարտութիւն մը,  
օջանի բորակատը (Gypsos seu unis), կու-  
գայ աւելի հեռուէն, Բերուէն. բայց դարձ-  
եալ ան ալ հարուստներու կողմանէ անար-  
գուած նիւթ մըն է: Զիլի հրատապ անա-  
պատներէն է որ կը հանեն օջանի բորա-  
կատը որ բորակածին կուտայ: Երկար ա-  
տեն անգիտացան կամ լուս եւ անարգեցին  
կեանքի այս պաշարը: Ոսկիի երկրին, Բե-

րուի մօտիկն էր որ շատ դարեր, մարդիկ  
կարծեցին թէ ոսկին միայն խուղարկու-  
թեան արժանի է: Երբ Ժ.Ջ դարու աշխար-  
հակալները, Ալմակրօի առաջնորդութեամբ  
կ'արշաւէին Հարաւային Ամերիկա՝ կողոպ-  
տելով ինդասները (Բերուի տիրապետները),  
սպաննելով հնդիկները, եւ հարստութիւն  
վնտռելու համար անապատին մէջ 200 մղոն  
առաջ երթալով. եւ կ'անցնէին բորակատով  
լի դաշտերու մէջէն, առանց երբէք տարա-  
կուսելու թէ ամբողջ աշխարհը հարստացը-  
նելու կարող բան մը ոտնակոխ կ'ընէին:  
Նոյն խի մեր դարուն մէջ, ո'րչափ որ Բե-  
րու կուսածներուն (Թռչնոց ծիրտ) արտա-  
ծումը թոյլ տուաւ բնիկներուն որ առանց  
նեղութեան մեծամեծ հարստութիւններու  
տէր ըլլան, Զիլիի սալիքները, թէեւ ծա-  
նօթ, անարգուած մնացին: Միայն քսանեւ  
հինգ տարիներէ ի վեր է որ մարդոց միտ-  
քէն անցաւ այս անարգ հողերու յատկու-  
թիւնները իմանալ: Եւ տեսան որ անոնք,  
ամբողջ աշխարհի մատակարարելու չափ բո-  
րակածին կը պարունակէին: Այսօր Թարա-  
վադայի ընդարձակ դաշտերէն կ'արտածեն  
հազարաւոր թօնօնեղով աղբորակ, որ մինչեւ  
Յրանսա կուգայ՝ հունձքին՝ զեղեցիկ գոյն  
մը տալու համար:

Վերջապէս, ամենէն աւելի արգասաւէտ  
քիմիական պարարտութիւնը առաջ կուգայ  
դարձեալ արհամարհուած նիւթերէ, աքսա-  
ֆօսֆօրուսի խարամներէն: Գիտենք որ այն  
հանածոները որոնցմով կը պատրաստեն պող-  
պատը յաճախ ֆօսֆօր կը պարունակեն: Եւ  
որպէս զի պողպատը մաքուր ըլլայ, պէտք  
է այս ֆօսֆօրը հանածոյէն հանել: Այս  
գործողութիւնը կը կատարուի մետաղագոր-  
ծական գործարաններու մէջ: Անգլիացի ար-  
հեստաւորի մը, Թովմաս Կիլգրիսթի հնարած  
մէկ եղանակին միջոցով, որ է խառնել չի  
մարած կիր՝ ձոյլին հետ, երբ ամէնքը մէկէն  
կը տաքցուն լարձր հնոցին մէջ: Այն պ-  
տեն կը միանայ ֆօսֆօրին հետ եւ այնպէս  
զայն ձոյլէն դուրս կը հանէ, Կիրէն ու ֆօս-  
ֆօրէն կազմուած այս բազալթութիւնը կը  
կոչուի կիրի ֆօսֆատ:

Ասի մետաղագործութեան մէջ բանի մը  
չի ծառայել: Խարամ մըն է միայն: Այս  
խարամը կը նետէին գործարանին դուռին

առջեւ, ուր անոնք հետզհետէ կը կազմէին փոքրիկ լիւններ: Երկար ատեն անոնք հոն մնացին իբրեւ անօգուտ և խափանիչ: Օր մը, խորհեցան որ այս կիրի ֆօսֆատը, թէ և կարծր, չոր, երբեմն ալ մետաղային, թերեւս օգտակար ըլլայ հողին: Դաշտի մը մէջ փորձեցին: Ասի գիւտ մը եղաւ: Յորենը շատ խիտ եւ գեղեցիկ կերպով բուսաւ: Յաջողութիւնը տեսնելով՝ այս խարամներուն մանրումը կատարելագործեցին եւ կրցան նուրբ փոշիի մը վերածել:

Այն օրը գտնուած էր կախարչ. Բլինկ-սօրի մասանին, որ կարող էր անջրդի անապատ մը խոտերով եւ ծաղիկներով զարդարուած մարդի մը վերածել:

Եւ ո՞ւր գտնուած էր ան, ոսկրածուխի նման միացորդներու եւ թարափաքայի պէս կիզիչ եւ անբեր անապատներու մէջ: Երկար ատեն, քիմիական պարարտութիւնները համարուեցան աւելորդ. բաներ զոր դուռնէն դուրս կը նետեն: Այսօր, մեր հողագործներու բերանին մէջ խառնւաբառ կը նշանակէ վերածնութիւն, աւատութիւն և հարստութիւն:

### Մեզի կերակուր պահպանողը՝ գանձնի հայրայթող չէ

Քիմիական պարարտութիւնները կրնան երկու տեսակի բաժնուիլ. հայրայթիչ պարարտութիւններ եւ խոհաբար պարարտութիւններ: Հայրայթիչները հողին կուտան ինչ որ բոյսերը անկէ առած են: Խոհաբարները հողին արդէն ունեցած սնունդը կը պատրաստեն եւ բոյսերու տրամադրութեան տակ կը դնեն: Արդարեւ, պարարտութիւններէ ոմանք, ինչպէս կիրի ֆօսֆատը, հայրայթիչ եւ խոհաբար միանգամայն են, բայց պէտք չէ այս երկու պաշտօնները իրարու հետ շփոթել: Պէտք չէ շփոթել մագոլիճն ու նպարավաճառը: Որոնք մեզի ուտելիք կը բերեն, խոհաբարին հետ որ զանոնք կը պատրաստէ ուտելու համար:

Զորօրինակ, կրնայ ըլլալ որ մարդագետին մը շատ մը բերքեր սնուցանելու չափ բորակածին պարունակէ, եւ սակայն, իր բերքը վտիտ ըլլայ: Ասի կը նմանի պարէններով լեցուն տունի մը, որուն ընակիչները անօթութենէ կը մեռնին: Ի՞նչ է այս գաղտ-

նիքին բացատրութիւնը: Պատճառն այն է որ, հողը բորակածին կը պարունակէ, բայց ուրիշ նիւթերու հետ խառնուած, եւ զոր իւրաքանչեւ անկարելի է, հետեւաբար ոչ ուտելի: Այս արտին մէջ բորակածինն է այնպէս ինչպէս հում միսն եւ բանջարեղէնները տունի մը մէջ: Պէտք է միայն պատրաստել բոլոր այս սնունդները և զանոնք ստամոքսներու տրամադրելի ընել: Պահանջուածն է քիչ մը խոհաբարութիւն:

Պարարտութիւններէ ոմանք կը կատարեն այդ գործը: Այսպէս, ի ընէ բորակածին ունեցող եւ անկէ օգտուելու անկարող դաշտի մը մէջ դիւէք կիր եւ խիոյն բորակածինը ազատ պիտի արձակուի: Բոյսերը զանի կ'իւրացնեն: Առուոյսը կանաչ և խիտ կը բուսնի: Կիրը բորակածինը աւելցուցած չէ, այլ հողին մէջ արդէն գտնուող բորակածինը պատրաստած է:

Ընդհակառակը, ֆօսֆօրական թթուն աւելի հայրայթիչ պարարտութիւն մըն է: Ան բոյսին ուտեստարանին պաշար կը հայրայթէ: Իր հայրայթածը մարտի չըլլար միշտ: Պարզ ֆօսֆատը բոյսերու կողմէն շուտ մը իւրաքանչեւ չէ: Պէտք է զանի երկար ատեն հողին մէջ ձգել բերքէն առաջ: Բայց այն ատեն զանի քիչ մը կը խոհակերեն, ծծմբային թթուի ազդեցութեան կ'ենթարկեն եւ այսպէս կը պատրաստեն նոր և բոյսերուն համար աւելի մատչելի սնունդ մը որ կը կոչուի սիւբէրֆօսֆատ: Ֆօսֆատը հում միսն է, իսկ սիւբէրֆօսֆատը՝ մի եւ նոյն եփուած միսն է: Բոյսը շատ դիւրաւ կ'իւրաքանչեւ զանի, մանաւանդ երբ դաշտին ջուրը քիչ մը թթու կը պարունակէ: Թթու պարունակող ջուրը համեմ մըն է, որ ֆօսֆատը բոյսերու սննդառութեան աւելի յարմար կ'ընէ. զանի լուծելի կ'ընէ: Ասոր համար է որ յայտագիրներու մէջ քանի մը պարարտութիւններու համար այս տեսակ բացատրութիւններ կուտան. ալֆօսֆատ և ֆօսֆատ և լուծելի:

Բայց պէտք չէ կարծել որ ուտեստարանը լեցուած է, որովհետեւ պարունակութիւնը եփել արուած է: Հիտեւաբար եթէ լաւ է կիր գործածել որ բորակածին կը հայրայթէ, մոռնալու չէ թէ այս բորակածինը կը հատնի, անսպառ չէ: Բորակածինն հատնելէն ետքը օգուտ չընէր կիր

գնել որ խոհարարութիւն ընէ, որովհետեւ ուր պաշար չկայ, հոն խոհարարութիւն ալ չկայ: Եւ այս կերպով հոգը ապականած ըլլալուն համար կիրը մեղադրել անիրաւութիւն է: Կիրը լաւ է, բայց արդէն գանուող բոլակածինը պատրաստելու համար լաւ է: Անիկա անոր տեղը չի լեցնել: Պէտք է որ մենք լեցնենք:

Ասոր համար կիրի ծծմբատը, որ ընդհանրապէս գաճ կը կոչուի. հայթայթ իջ պարտութիւն մը չէ. հոգին նոր սնունդ մը չիտար: Ընդհանրապէս, ինչպէս որ թոյլ էր, հիմա գործած կ'ըլլայ. բոյսերուն մէջ կը թափանցէ եւ զանաւոր կը զօրացնէ: Արդի մը մէջ կիրի ծծմբատ, որու պէտք չունի, այլ մանաւանդ բոթաս, զոր արդէն ունէր բայց չէր գիտեր գործածել: Հայթայթ իջներուն եւ խոհարարներուն մէջ այս գանաղանութիւնը չըլլալուն համար, երկար ժամանակ անիրաւութիւն եղած է ընդհանուր քիմիական պարարտութեան համար: Որովհետեւ քիմիական պարարտութիւնը բոյսին ուտեստարանը չի լեցնել միշտ, այս պարագայէն հետեւցուցած են որ անիկա ուրիշ բան չընէր, այլ միայն ուտեստարարանը պարզել, այլ միայն « խորազանի հարուած մը տալ » բուսաբերութեան, եւ թէ, ինչպէս կ'ընեն, « Հայրը կը հարստացնէ եւ զաւակները կը կործանէ »: Այս ամէնը ճշմարիտ է առանձին գործածուած խոհարար պարարտութեան համար. բայց ճշմարիտ չէ ընդհանուր եւ գատողութեամբ գործածուած պարարտութեան համար:

Թարգ.

ԳԱՌՆԻԿ Դ. ՄԵՍՐՈՊԵԱՆ



## Ե Ր Ե Ի Ա Կ

Ե Ր Ե Ի Ա Կ Ի Օ Ղ Ա Կ Ն Ե Ր Ը

(Շար. 15րդ. քիւնե եւ վերջ)

Երեւակ ութը արբանեակներ ունի, որոնք առաջինը գտաւ Հիւսէն, չորս հատը՝ Քասինի, երկուքը՝ Ռ. Հէրշէլ, եւ ութերորդը՝ Պոնտ ու Լասէլ: Այս մարմինները Երեւակին՝ Արեւուն շուրջը ըրած երեսնամեայ շրջանին մէջ անոր կը հետեւին

50,000 էն մինչեւ մէկ միլիոն փարսախ հեռաւորութեամբ, գծելով ահագին թերտներ որոց վառարանը՝ մոլորակին կեդրոնն է: Երեւակի ամէնէն մօտիկ արբանեակը, Միմաս, քսաներկուքուկէս ժամէն կը կատարէ իր շրջանը, մինչդեռ ամէնէն հեռուն գտնուողը 79 օրէն կը թաւալի:

Ինչպէս կը տեսնէք, Երեւակի դրութիւնը՝ ինքնին բաւական կարեւոր աշխարհ մը կը կազմէ. հիմա զայն քննելով նոյնիք թէ ինչ բանով կը տարբերի մեր երկունքէն՝ ինչ բանով կը նմանի անոր:

Երեւակ մենէ այնչափ հեռու է որ կարելի չէ անոր մակերեւոյթը մանրամասնօրէն զննել, ինչպէս որ կ'ընեն գիտնականները Լուսինին եւ մինչեւ իսկ Հրաբին համար: Յակայն մինչեւ հիմա եղած զննութիւններէն կարելի է բան մը քաղել սոյն զարմանալի աշխարհին վրայ:

Երեւակի բնակիչները, եթէ ունի, ծերանալու համար շատ տարիներու պէտք չունին, երկրի ամէնէն ծեր, ամէնէն տարեքստ բնակիչը՝ Երեւակի մէջ դեռ երեքուկէս տարեկան պիտի ըլլար, որովհետեւ հոն օրը 10 ժամ է եւ մէկ տարուան մէջ 25 հազար օր կայ, անանկ որ ամէն մէկ եղանակ 6250 օր կը տեւէ:


Յերեկոյան ու գիշերի տեւողութիւնը շատ փոփոխական է, ինչու որ սոյն միւլրակին առանցքը 64 աստիճանի չափ ծած է իր գծած ճամբուն մակերեւոյթին վրայ: (Մեր երկրագունտն ալ իր գծած թերաւին մակերեւոյթին վրայ ծած ըլլալուն համար է որ գիշեր ու ցերեկները անհաւասար երկարութիւն կ'ունենան:) Ըսել է լայնութեան 64րդ աստիճանէն վեր է որ կ'սկսի լայնութեան գօտին: Հասարակածին վրայ գիշերն ու ցերեկը գրեթէ հինգ ժամ մէկ քաւորող տեւողութիւն կ'ունենան: Երեւակի ամբողջ մէկ տարուան մէջ մէկ հեղ մը միայն բեւեռներուն վրայ գիշեր մը ու ցերեկ մը իրարու կը յաջորդեն: Մնացեալ բոլոր ժամանակը մէկ բեւեռը անդադար կը լուսաւորուի արեւէն մինչդեռ միւսը միշտ թաղուած կը մնայ խաւարին մէջ:

Եթէ այս պայմաններուն տակ, հաշիւի առնենք նաեւ Երեւակը Արեգակէն անջատող 1 միլիաւ 400 միլիոն քիլոմէթրի ահագին հեռաւորութիւնը (գրեթէ Երկրի

Արեգակէն ունեցած հեռավորութեան 9 ու կէս անգամը) կը տեսնենք որ յոյսն ու ջերմութիւնը այն մոլորակին վրայ հասած ժամանակներն 90 աս 1 համեմատութեամբ նւազած են:

Այս թիւերէն կը տեսնուի թէ Երեւակի բնակիչ մը արեւուն սկաւառակը մեր տեսածէն 90 անգամ աւելի փոքր պիտի տեսնէ: Դիւրին պիտի ըլլար ճշդել Երեւակի վրայ ըրած ջերմութեան աստիճանը և ուրիշ օդերեւութական երեւոյթներ, եթէ գիտնայինք վստահօրէն թէ այդ մոլորակին մթնոլորտը ինչէ՞ կազմուած է ի՞նչ կազեր կը պարունակէ: Քիչ շատ հասկցուած է թէ այդ մթնոլորտին մէջ կայ ջրոյ շոգի և ու-

րիս վրայ գտնուածներէն: Երկրագնդիս վրայ երկրաբանական զանազան շրջաններու մէջ իրարու յաջորդող կենդանիներն կամ բոյսերը իրարմէ բոլորովին անջատ յատկութիւններ ունեցած են, որոնք յարաբերաբար հետեւանքն են բնական ու օդերեւութական տարբեր պայմաններու: Արդ, եթէ բարեխառնութեան քիչ մը բարձր կամ ցած աստիճան մը, մթնոլորտին մէջ այսինչ կազին քիչ մը աւելի շատ կամ քիչ գտնուիլը, մէկ խօսքով՝ միջավայրի այսքան պզտիկ տարբերութիւններ կարող եղած են զանազան դարերու մէջ ապրող կենդանի էակներուն կազմութեան մէջ խոշոր փոփոխութիւններ մտցնել, հապա ի՞նչ չկրնար ըսել



րիչ կազեր գորս մեր երկրին վրայ չենք ճանչնար: Երեւակի խտութիւնը ջուրի խտութենէն քիչ է (0,725): Կրնանք ըսել թէ այդ մոլորակը կազմուղ նիւթերը ընդհանուր հաշուով մեր ձիթենիի փայտին ծանրութիւնը ունին: Երեւակի գունտը շատ տափաւիցած է, եթէ երկու բեւեռներէն անցնող աւանցքին երկայնութիւնը 8 սեպենք, հասարակածին տրամագծին երկայնութիւնը 9 կ'ըլլայ:

Գուցէ Երեւակ հեղուկ կամ կաղային վիճակի մէջ գտնուի, ամէն պարագայի մէջ իր վրայ ապրող գործարանաւոր էակները բոլորովին տարբեր կազմուածք մը ունին երկ-

մէկ մոլորակի մը՝ Երկրիս և ուրիշ մոլորակի մը՝ Երեւակին մէջտեղ եղած կազմութեան և այլ ահադին տարբերութիւններ, ինչպէս օրերու այսքան քիչ տեւողութիւնը Երեւակի վրայ, եղանակներու երկար ժամանակ միօրնակ ընթացքը, մոլորակին թաւալման սարսափեցուցիչ արագութիւնը: Ահա՛, ասոր համար կ'ըսենք թէ Երեւակի վրայ կեանքի առած ձեւերուն մասին բան մը գուշակել հնարին չէ:

Աւելի դիւրին է խորհիլ թէ Երեւակի բնակիչի մը առջեւ ի՞նչ տեսարան կը պարզուի, մանաւանդ գիշեր ատեն, երբ ան կը դիտէ իր մոլորակին օդակը և ութը լու-


սինները, կամ նոյն իսկ՝ օղակին վրայ կեցող մէկը ի՞նչ դիրքի մէջ պիտի տեսնէր Երեւակը։ Ահա՛ հետաքրքրաշարժ խնդիրներ։

Գիշեր տառն աստեղագիտութիւնը կամարը գըրեթէ միեւնոյն տեսարանը կը պարզէ Երեւակի բնակիչներու աչքին առջեւ՝ ինչ որ կը ցուցնէ Երկրագունդին հիւրերուն համար։ Մինակ հոն լուսատուները երկու երրորդ աւելի շուտ ժամանակի մէջ կը կատարեն իրենց ընթացքը երկնակամարին վրայ, նոյնպէս մէկ գիշերուան մէջ տեսնուած համաստեղութիւնները բաւական երկար ժամանակ կ'երեւին, քանի որ ամբողջ երկինքի չլջանը ընելու համար Երեւակի բնակիչ մը

ետեւ ծածկուելով ամբողջ կարմրած դէմքը ձեղի կը դարձնէ։ Հապա՛ մակընթացութիւնները։ Գիտէ՞ք որ տեղատուութիւն ու մակընթացութիւն՝ երկրիս վրայ արդիւնք են Լուսնի ձգողութեան։ մենք մէկ հատ մը միայն արբանեակ ունելով՝ դիւրաւ մը առաջուրնէ հաշուած ենք մակընթացութիւնները, մինչդեռ Երեւակի բնակիչները ութը մակընթացութիւն ունին հաշուելու համար, եւ եթէ մէջէն կրնան ելլալ՝ երանի իրենց։

Այս համառօտ նկարագիրը լմնցնելէ առաջ վերջին եւ ամենէն հետաքրքիր կէտի մը վրայ երկու խօսք ըսենք։

Ենթադրենք թէ մոլորակին վրայ ինք



երեսուն տարիէ աւելի ժամանակ ունի իր առջեւ։

Հոնտեղի երկինքին տեսքը փոխողը՝ Երեւակի ութը արբանեակներն են։ Ինչպէս վերը ըսինք, այս լուսինները տնհաւասար արագութեամբ և տարբեր ժամանակներու մէջ կը դառնան մոլորակին շուրջը. անոնց ամէն մէկը մեր Լուսինին բոլոր երեւոյթները կ'ընծայէ. անոր պէս առաջին կամ վերջին քառորդ ունի, ամբողջ Լուսին կ'ըլլայ, նոր կը ծնի, եւայլն։ Արդ՝ սքանչելի բան չէ՞ դիտել մէկ գիշերուան մէջ քանի մը Լուսիններ միայնգամայն որոնց մին դեռ նոր կը ծագի, միւսը արդէն իսկ հորիզոնին

ու օղակները կը դիտենք, եւ կամ օղակի մը վրայ դանուելով Երեւակը տեսնել կ'ուզենք, ի՞նչ տեսարան պիտի սարգուի մեր աչքին առջեւ։

Դիւրին է գուշակել թէ Երեւակի բոլոր կէտերէն ալ կարելի չէ տեսնել իր օղակները, լայնութեան 64 աստիճանէն վեր մինչեւ բեւեռ կեցող մէկը՝ բան մըն ալ չի կրնար տեսնել։ Օղակները նշմարելու համար այդ սահմանէն վար դէպ ի հասարակածը դալու է։

Ընթերցողներուն աւելի դրական բացատրութիւն մը տալու համար եւս կը դընենք օղակին պատկերը երբ մէկը զայն կը

դիտէ մոլորակին վրայէն: Ինչպէս վերը ըսինք, չգիտնալով թէ Երեւակի գունտը ի՞նչ վիճակ ունի, պատկերին մէջ ան ներկայացուած է իբր հաստատուն եւ երկրիս կազմութեան նման կազմութիւն ունեցող գունտ մը: Իսկ երկրորդ պատկերին մէջ օղակն ենթադրուած է իբր հեղուկ: Բայց ասիկա ալ լաւ մը գիտցուած չէ: Սոյն պատկերներուն մէջ ամէնէն կարեւորն է օղակին ու մոլորակին տեսնուած ձեւերը, եւ ամէնէն մեծ հոգ տարուած է ճշդի գծելու համար ատոնք:

ՁԱՐԵՂ Ն. ՊԵՐՊԵՐԵԱՆ

Գոհութեամբ կը ծանուցանենք թէ, Լոյս շաբաթաթերթը, որ Տպագրական Տեսչութեան կողմանէ անպայման կերպով գաղարման ենթարկուած էր, արտօնութիւն ստացաւ վերստին հրատարակուելու, անցեալ շաբաթ օրորձնէ սկսեալ:

Տպարանիս տեղափոխութեան պատճառաւ Հանրագիտակի հրատարակութիւնն 10 օրի չափ ուշ մնաց, բայց ասով մեր ազնիւ բաժանորդները բան մը կորսնցուցած չպիտի ըլլան, որովհետեւ տարեկան 36 թիւը ամբողջ պիտի ստանան:

Մեր նոր հասցէին ուշադրութիւն ընել կը խնդրուի:

نشانه بربریان مطبعی

استانبول باب علی جادسی نومرو ۳۸

ՆՇԱՆ Կ. ՊԵՐՊԵՐԵԱՆ

ՏՊԱԳՐՈՂ-ՀՐԱՏԱՐԱԿԻՉ

Կ. Պոլիս Պապ-Ալի ճափսէի բիւ 38

NICHAN BERBÉRIAN

IMPRIMEUR-ÉDITEUR

Stamboul, Bab-Ali Djaddéssi N. 38

Կը խնդրենք մեր Մեծ. Գործակալներէն եւ Բաժանորդներէն՝ որ Հանրագիտակի Շրջութիւնն աւելորդ եթէ ունին՝ մեզ վերադարձնելու շնորհ ընեն:

ԿԱՐԵՒՈՐ ԾԱՆՈՒՑՈՒՄ

Մեր Մեծ. Բաժանորդներուն կողմէ եղած որ եւ իցէ յանձնարարութիւն սիրով եւ առանց փոխարինութեան կը կատարենք՝ եթէ յանձնարարութեան հրամանին հետ ալ:

Ժէքն ալ ԿԱՆԽԻԿ ղրկուի, հակառակ պարագային, չենք կարող որ եւ իցէ յանձնարարութիւն կատարել ԱՊԱՌԻԿ:

Նոյնպէս, այցաքարդերու յանձնարարութիւնները 100 հատի վրայ կ'ընդունուին, իսկ 50 հատ եղած ապսպրանքներն չենք կարող ընդունիլ:

### ՆԱՄԱԿԱՏՈՒՓ ՀԱՆՐԱԳԻՏԱԿԻ

Սիւմ Համի քէօյ — Թ. էֆ. Օ. — 1-16րդ թիւերը ղրկուեցաւ, փոխարժէքը կրնաք մանտա բօսնով ուղղակի մեզ ղրկել:

Ատանա. — Ն. էֆ. ձ. — Ղրկուեցաւ 8-16րդ թիւերը:

Երզնկա. — Պ. էֆ. Ա. — 1-9 եւ 5 թիւերը ղրկուեցան: Ձատ նամակ կ'ընդունիր:

Ձմիւռնիա. — Կ. էֆ. Մ. — 8րդ թիւէն սկսեալ ղրկուեցաւ նոր բաժանորդին

Սիւրիհիսար. — Մ. էֆ. Յ. Պ. — Ձեր առաջարկն սիրով կ'ընդունինք, կրնաք ձեր յանձնարարութիւններն ընել, եւ փոխարէնը մանտա բօսնով կամ փոխանակագրով ղրկել:

Հիւսէյնիկ. — Կ Մ. Յ. էֆ. — Ստացանք 14 Մարտ ամսաթիւ նամակնիդ: Խորին շնորհակալութիւն: Ձատ նամակ կ'ընդունիր:

Թալաս. — Ռ. Ն. Ա. էֆ. — Ստացանք ու ղրկուեցաւ 1-16 թիւերը:

Կարին. — Տ. էֆ. Բ. — Նոր բաժանորդներուն ղրկուեցաւ 1-16 թիւերը:

Սամսօն. — Յ. էֆ. Կ. Ն. — Նոր Խաժանորդներու 1-16 թիւերը ղրկուեցաւ:

### Ա Ռ Զ Ե Ռ Ն

ՆԱՄԱԿԱՆ Ի

ՊԱՐՈՒՆԱԿՈՒԹԻՒՆ

Նոր տարւոյ եւ Անուան տօնի նամակներ

Ո Ւ Ղ Ե Ր Զ Բ

Յաւակցական, Յանձնարարական

ԳՈՐԾԻ ՆԱՄԱԿՆԵՐ, ԿՏԱԿՆԵՐ, ԱՂԵՐՍԱԳՐԵՐ

Վկայագրեր, Ընտանեկան նամակներ, Տոմարներ

Գրագիտաց նամակներ

Յ Օ Ր Ի Ն Ե Ց

ՍԻՄՈՆ ԳԵՐԱՄԱՃԵԱՆ

Բ. ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ

Կեդրոնացեալի վանառման՝ Կ. Պոլիս, Հանքուլօ խան, բիւ 24: Կը գտնուի նաեւ բոլոր հայ գրավանառաց բով. Գիւն Զ դիկն:

ԽՐԱԳՐԱՊԵՏ — ԱՐՏՕՆԱՏԷՐ

Ա Ր Մ Է Ն Ա Ռ Ն Ս Է Ն Ե Ա Ն

ՏՊԱԳՐՈՂ — ՀՐԱՏԱՐԱԿԻՉ

Ն Շ Ա Ն Կ. ՊԵՐՊԵՐԵԱՆ

Պապը Ալի նատէսի, թիւ 38, Իգտամ լրագրի դէմ



Կ. ՊՈԼԻՍ, ՊՍՊԸ Ս.Լ.Ր ՃԱՏՏԷՍԻ, ԹԻՒ 38. ԻԴՏԱՄ ԼՐԱԳՐԻ ԴԻՄԱՑ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՔ ՆՇԱՆ ՊԵՐՊԵՐԵԱՆԻ

|                                                             |    |
|-------------------------------------------------------------|----|
| Հին Ուխտի ( Սրբազան պատմութիւն )                            | 4  |
| Նոր » » »                                                   | 4  |
| Ծաղկաքաղ ( Ընտիր կտորներ ընթերց . )                         | 3  |
| Ֆրանսերէն պատկերազարդ Քերական                               | 2  |
| Կ . Տէմիրեան էֆ . Ի Իրագիտութեան<br>Ամբողջական դասընթացքը : |    |
| Ծաղկաքաղ եկեղեցական պատմութեան                              | 4  |
| Քրիստոնէական ( Ս . Խանճեան )                                | 2  |
| Ժողովրդական Տարեցոյց                                        | 6  |
| Բուրաստան Մանկանց (Տարեկանը)                                | 10 |
| Աղօթագիրք                                                   | 10 |



Ը Ն Տ Ի Ր

Z O S U H E S

Խ Ն Ա Յ Ռ Ղ Ա Կ Ա Ն



կատարուին ամենայն ճշգույնությամբ.  
Ա. ժ. ան, ընտիր ու հոտաւէտ թէյ գործածողներու ջերմապէս կը յանձնարարենք ան-  
դամ մը այցելել Կ. ԵՍԱՎՐՈՒԻԱՆ ԵՒ Յ. ԻՍԱԳՈՒԼԻԱՆ վաճառատունը, Ճէլալ-Պէյ խանի  
կից թիւ 10, ուր պիտի դտնեն մեծաքանակ և փոքրաքանակ թէյի ճոխ մթերք մը:  
Ա. ժ. Ա. Ն.

Հանրագիտակ ձեռքէ կը ծախուշի Պոլսոյ մէջ հատուր  
40, իսկ գաշառաց մէջ 50 փարսոյ :